

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 25.04.2012թ-ի նիստում քննության է առնվել «Յուտա» ՍՊԸ գանգատը «ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 28.03.2012թ. թիվ 2113800 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն «ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 16.03.2012թ. թիվ 2113800 հանձնարարագրի, «Յուտա» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է ակցիզային դրոշմանիշների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 28.03.2012թ-ին կազմվել է թիվ 2113800 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ստուգման արդյունքում «Յուտա» ՍՊԸ-ին պատկանող էսանջայն 15 հասցեում գործող մթերային խանութից հայտնաբերվեց և մեր կողմից վերցվեց «Կլասիկ Սիլվեր» ծխախոտի 1 (մեկ) տուփ, ակցիզային համար Բ 12400506 տրված 2008թ-ին, որը տեղադրված էր ցուցատախտակին և վաճառքի գինը կազմում էր 300 դրամ:

«Յուտա» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

2012 թվականի մարտի 29-ին փոստի միջոցով «ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 2012 թվականի մարտի 28-ի թիվ 2765/3 գրությամբ Ընկերությանն է ներկայացվել ստուգման ակտը: Ընդ որում գրությամբ նշվել է, որ ընկերությունը հրաժարվել է ստուգման ակտը ստորագրելուց և կից ներկայացվել է նաև ստուգման ակտը ստորագրելու մասին 2012 թվականի մարտի 28-ի թվագրված արձանագրությունը:

1. Նախ նշենք, որ մինչև փոստով ստացված լինելը, ստուգման ակտը չի ներկայացվել ընկերությանը և դրա կազմված լինելու մասին ընկերությունը տեղեկացել է միայն փոստով ստանալուց հետո: Մինչդեռ ստուգող մարմինն արձանագրել է, որ ընկերության տնօրենը հրաժարվել է ակտը ստորագրելուց:

2. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն, ստուգման ակտում նշվում է ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել: Տվյալ դեպքում ստուգման ակտով արձանագրված չէ այն իրավական ակտի նորմերը, որոնց պահանջներն ընկերության կողմից չեն կատարվել:

«Յուտա» ՍՊԸ-ի էսանջայն 15 հասցեում գործող մթերային խանութում հարկային աշխատակիցների կողմից մանրամասն զննվել է խանութում վաճառքի համար նախատեսված ամբողջ ենթակցիզային ապրանքները և որևէ խախտում չի հայտնաբերվել:

Ստուգման ակտի նախագծի 1-ին կետով ներկայացված «ցուցատախտակ» մասվածը վերաբերում է «Գրանդ Տոբակո» ընկերության կողմից տրամադրված, խանութի առաստաղից ամրացված ցուցանմուշների ստենդին: Մանրամասն զննվել է ցուցանմուշների ստենդի վրա ստանձով ամրացված ծխախոտի տուփերը (հատ-հատ պղկելու միջոցով), որոնք առաստաղին ամրացված լինելու պատճառով փոշոտ ու կեղտոտ էին: Ընդ որում, նշված «Կլասիկ Սիլվեր» ծխախոտի 1 (մեկ) տուփը, դրոշմավորված «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշով, հայտնաբերվել է հենց նմուշների ստենդից, որը նույնպես ստանձով ամրացված է եղել նշված ստենդին: Հարկ է նշել, որ առաստաղին ամրացված ստենդի վրա ցուցադրված, փոշոտված և ստանձով ստենդին ամրացված ծխախոտի նմուշը չի կարող վաճառքի համար նախատեսված լինել:

Նշված տուփի վրա գնի պիտակ չի եղել ամրագրված, հետևաբար ստուգման ակտում գրված վերացական «վաճառքի գինը կազմում էր 300 դրամ» արտահայտությունը տեղին չէ:

«Կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի թիվ 611-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ 2012 թվականի հունվարի 1-ից ՀՀ-ում արգելվում է ՀՀ ներմուծված կամ ՀՀ-ում արտադրված՝ «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված արտադրանքի իրացումը:

Մինչդեռ ստուգող մարմնի կողմից որևէ կերպ չի ապացուցվել նշված մեկ տուփ ծխախոտն իրացման համար նախատեսված լինելու կամ իրացման փաստը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ գտնում ենք, որ վիճարկվող դեպքերում չի ապահովվել հիշյալ իրավանորմով սահմանված պարտավորությունների պատշաճ կատարումը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով խնդրում ենք ստուգման ակտն անվավեր ճանաչել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության տնօրենի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստրկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում ստուգումն իրականացրած անձինք պնդեցին, որ ստուգման ընթացքում ընկերության պատկանող Խանջյան 15 հասցեում գործող մթերային խանութից հայտնաբերվել և ի տնօրինություն է վերցվել «Կլասիկ Սիլվեր» տեսակի 1 տուփ ծխախոտ, որը դրոշմավորված է եղել «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշով (համար P12400506): Նշված 1 տուփ ծխախոտը տեղադրված է եղել ցուցատախտակին և վաճառքի գինը կազմել է 300 դրամ:

Հիշատակված «Կլասիկ Սիլվեր» տեսակի 1 տուփ ծխախոտը տեղադրված է եղել ցուցատախտակի վրա, որի վաճառքի գինը կազմել է 300 դրամ: Այս փաստը հիմնավորվում է նաև ընկերության կողմից գանգատին կից ներկայացված լուսանկարներով: Ինչ վերաբերում է ընկերության տնօրենի այն պնդմանը, որ ստուգման ընթացքում ի տնօրինություն վերցված «Կլասիկ Սիլվեր» տեսակի ծխախոտը փակցված է եղել ցուցատախտակին, ապա ստուգումն իրականացրած անձինք նշեցին, որ այն չի համապատասխանում իրականությանը:

Քննարկվող դեպքում ընկերության Խանջյան 15 հասցեում գտնվող մթերային խանութում իրականացվել է ակցիզային դրոշմանիշների կիրառման ճշտության ստուգում, որի ընթացքում ցուցատախտակից հայտնաբերվել և ի տնօրինություն է վերցվել «Կլասիկ Սիլվեր» տեսակի 1 տուփ ծխախոտ՝ դրոշմավորված «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշով: Նշված փաստն ընդունեց նաև ընկերության տնօրենը: Ինչ վերաբերում է ստուգման ակտով արձանագրվածը խախտում դիտարկելու և համապատասխան պատասխանատվության միջոց առաջադրելու հարցին, ապա վերջինիս լուծում կտրվի ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կորգով քննվող վարչական վարույթի ընթացքում:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է բացասական եզրակացություն:

Հանձնաժողովը, կրկին անգամ ուսումնասիրելով սույն գանգատին առնչվող նյութերն ու ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով Գանգատարկման խորհրդի եզրակացությունը, գտնում է, որ ստուգման ակտը ենթակա է չեղյալ համարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո թ ո շ ու մ է՝**

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 28.03.2012թ. թիվ 2113800 ստուգման ակտը:



Հանձնաժողովի նախագահ՝

S.ԱՂԱՅԱՆ